

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/2

18 ապրիլի 2016 թ.

Քննարկվեց «Թրի Միրմեյդ Բիչ» ՍՊԸ 09.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.02.2016թ-ի թիվ 311652 որոշման դեմ:

«Թրի Միրմեյդ Բիչ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Ընկերությունը օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ-ի 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը:

2016թ-ի փետրվարի 18-ին ստացվել է 29.01.2015թ-ի թիվ 106 վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը՝ ենթարկելով ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի երկրորդ մասով պատասխանատվության, սակայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.02.2016թ-ի թիվ 311652 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 29.01.2016թ-ի 106 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզել է, որ «Թրի Միրմեյդ Բիչ» ՍՊԸ տնօրեն Գրիգոր Պետրոսյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ-ի 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը, որի համար նախատեսված է վարչական պատասխանատվություն: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով՝ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 10.02.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 311652 որոշումը (այսուհետ՝ Որոշում) Գրիգոր Պետրոսյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Որոշումը կայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում»

իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում Գրիգոր Պետրոսյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել 2015թ-ի 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածների համաձայն ԱԱՀ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ իրենց գրանցման վայրի հարկային տեսչության մարմին են ներկայացնում պետական բյուջե ԱԱՀ-ի վճարման համար համապատասխան հաշվարկներ:

Տվյալ դեպքում Գրիգոր Պետրոսյանի կողմից իրավախախտումը կատարվել է 2015 թ-ի հոկտեմբերի 21-ին, սակայն վարչական տույժը նշանակվել է միայն 10.02.2016թ-ին: Այսինքն՝ վարչական տույժը նշանակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ, այն է՝ իրավախախտումը կատարվելու օրվանից երկու ամիս հետո ընկած ժամանակահատվածում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո ր ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.02.2016թ-ի թիվ 311652 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

